«Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության
ԴԻՏՈՐԴԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հիմնարար սկզբունքներ

1.1 Անաչառություն և չեզոքություն: «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական ՀԿ դիտորդը (այսուհետ՝ դիտորդ) պետք է լինի քաղաքականապես չեզոք, չցուցադրի իր նախապատվությունները որևէ թեկնածուի կամ կուսակցության նկատմամբ:

1.2 Միջամտության արգելք: Դիտորդն իրավունք չունի միջամտել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ քվեարկության ընթացքին: Նա միայն դիտարկում է:

1.3 Օրինականություն: Դիտորդը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությունը և հարգել հանձնաժողովի անդամների ու ընտրողների իրավունքները:

1.4 Հարգալից վերաբերմունք: Լինել կոռեկտ և հարգալից հանձնաժողովի անդամների, վստահված անձանց և ընտրողների նկատմամբ:

1.5 Ճշգրտություն: Զեկույցներ ներկայացնելիս հիմնվել միայն փաստերի, այլ ոչ թե ենթադրությունների կամ լուրերի վրա:

1.6 Գաղտնիություն: Դիտորդն իրավունք չունի հրապարակել այն, ինչ վերաբերում է մարդու մասնավոր կյանքին:

2. Դիտորդն իրավունք ունի՝

1) Ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնում,

2) Հետևել քվեարկության նախապատրաստմանը, քվեաթերթիկների տպագրմանը, տեղափոխմանը և պահպանմանը,

3) Ծանոթանալ ընտրողների ցուցակներին, քվեաթերթիկների նմուշներին, հանձնաժողովի որոշումներին և արձանագրություններին,

4) Լուսանկարել և տեսանկարահանել տեղամասում այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը և չխոչընդոտվի հանձնաժողովի աշխատանքը,

5) Ազատ տեղաշարժվել տեղամասում՝ քվեարկության սենյակում գտնվող անձանց և քվեարկության խցիկները տեսանելի պահելու համար (առանց գաղտնիությունը խախտելու):

3. Դիտորդին արգելվում է՝

1) Քարոզչություն անել՝ չի կարելի կրել կուսակցական սիմվոլիկա կամ հորդորել ընտրողներին քվեարկել որևէ մեկի օգտին,

2) Տալ ցուցումներ՝ դիտորդը չի կարող հանձնաժողովին ասել, թե ինչպես աշխատել կամ ուղղորդել ընտրողին,

3) Միջամտել քվեարկությանը՝ չի կարող օգնել ընտրողին քվեարկել (նույնիսկ եթե վերջինս խնդրում է), չի կարող դիպչել քվեաթերթիկներին կամ քվեատուփին,

4) Խախտել գաղտնիությունը՝ արգելվում է տեսնել կամ լուսանկարել, թե ինչպես է ընտրողը քվեարկել քվեախցիկում:

4. Դիտորդի վարքագիծը խախտումներ նկատելիս. Եթե դիտորդը նկատում է ընտրական օրենսգրքի խախտում.

1) պետք է այդ մասին տեղյակ պահի հանձնաժողովի նախագահին (առանց կոնֆլիկտի մեջ մտնելու),

2) կարող է պահանջել, որ իր դիտարկումն արձանագրվի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում,

3) պետք է փաստագրի խախտումը (ժամը, բնույթը, հնարավոր վկաները) և զեկուցի «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական ՀԿ դիտորդական առաքելությանը:

«Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական ՀԿ
Ք.Երևան, Մ.Մաշտոցի 4-1/1,
374-10-588-768
ՀՎՀՀ 03308579
Նախագահ՝ Ա. Գրիգորյան

_____

ԿՏ

Ստորագրող
ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3905920050

2026-04-14 14:46:48 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից